**ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ** *

DOI:10.57155/JNRD6943

# ԵՐԿՈՒ ՀՆԱՏԻՊ ՀՄԱՅԻԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

***Բանալի բառեր՝*** *Հնատիպ, հայտնաբերված հմայիլներ, Վարդաձոր գյուղ Արևմտյան Հայաստան, Ալաշկերտ տարածաշրջան, գալարաձև, հետագա հիշատակարաններ:*

*ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր*[1] *գյուղը ուշագրավ է ոչ միայն իր հնամենի հուշարձաններով, այլև՝ այնտեղ պահվող գրավոր-մշակութային ժառանգությամբ, մասնավորապես՝ ձեռագիր և տպագիր հմայիլներով, տպագիր ավետարաններով, շարակնոցներով, աղոթագրքերով, ժամագրքերով և այլն:*

*Սույն ուսումնասիրության հիմքում՝ Վարդաձորում հանգրվանած ԺԸ. դարով թվագրվող տպագիր հմայիլների երկու նորահայտ օրինակներ են:*

*Ըստ Հրաչյա Աճառյանի՝ հմայիլ բառը ծագում է պահլավերեն humay ձևից և նշանակում է «օրհնեալ, օրհնութեամբ լի»*[2]*: Գրեթե նույն բացատրությունն է Ստեփան Մալխասյանցի բացատրական բառարանում, որտեղ ևս բառի ծագումնաբանությունը կապվում է պահլավերեն «humav. օրհնեալ» բառի հետ*[3]*, այն է՝ «Աղոթած՝ կախարդական աղոթքներով պատրաստված մի առարկայ, որը կրողին պահպանում է այլևայլ փորձանքներից»*[4]*: Այսինքն՝ «Հմայիլն աղոթքների, աղերսների, մաղթանքների ժողովածու է, որն ունի պահպանիչ-բուժիչ նշանակություն»*[5]*: «Հմայիլները հին ծագում ունեն և նրանց առաջին օրինակները*

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող, saten.2012@mail.ru, հոդվածը ստանալու օրը՝ 18 մայիսի, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ 10 հոկտեմբերի, 2023:

1 **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան,* հ. 4 (Ն-Վ), Երևան, 1998, էջ 775:

2 **Հ. Աճառեան,** *Հայերէն արմատական բառարան,* հ. Գ, (Հ-Զ), Երևան, 1977, էջ 103:

3 **Ս. Մալխասեանց,** *Հայերէն բացատրական բառարան,* հ. 3 (Հ-Ո), Երևան, 1944, էջ 113:

4 **Դ. Ղազարյան,** «16-րդ դարի ժապավենանև հմայիլները», *ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջան նվիրվում է Տիգրան Զուխաճյանի ծննդյան 175-ամյակին (19-21 հոկտեմբերի, 2012), Նստաշրջանի նյութեր,* Երևան, 2013, էջ 292-309, **Е. Мещерская,** “Сирийские заклинательные сборники из Матенадарана”. Палестинский сборник, Вып. 27, Л. 1981, с. 96:

5 **Դ. Ղազարյան,** *Ժապավենանև Հմայիլներ,* Երևան, 2013, էջ 3:

*երևան են եկել դեռևս Հին Եգիպտոսում, որոնք պատրաստվել են եգիպտացիների համար սրբազան համարվող կոյաբզեզի ձևով: Այն կրողները՝ տեղական հավատալիքների համաձայն, անմահություն են ստացել»*[6]*:*

*«Փաթեթը կամ գալարը հմայագիր ժողովածուների համար հնագույն ձև է և իր արմատներով հարում է հնագույն մոգական փորձին, երբ համարվում էր, որ այդ ձևով փաթաթված աղոթքը կամ անեծքը արտաքին անբարեպատեհ ազդեցությունների չի ենթարկվում և դրանով իսկ մեծ ուժ է ձեռք բերում» (նշենք, որ գալարաձև հմայիլներից զատ կան նաև գրքաձև, եզակի օրինակ հանդիսացող հմայիլներ, որոնք ավելի ուշ շրջանի են)*[7]*:*

*Հայկական տպագրության սկզբնավորումից հետո ի հայտ եկան նաև տպագիր հմայիլները, որոնք հիմնականում ստեղծվում էին ձեռագիր օրինակների նմանողությամբ: Այսօր այդ միավորների զգալի մասը գտնվում է տարբեր հաստատություններում: Հայերեն հնատիպ հմայիլների ամենամեծ հավաքածուն գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում՝ ավելի քան 117 միավոր: Իսկ մի մասն էլ պատկանում է տարբեր անհատների և ընտանիքների:*

*Մեր ուսումնասիրության խնդրո առարկա զույգ հմայիլները Վարդաձոր գյուղի բնակիչներ Համբարձում Պետրոսյանի, Ալեքսան և Վարդգես Սիրականյաններ*[8] *ընտանիքների սեփականությունն են, թվակիր են՝ 1716, 1717 թթ.: Այս երկու ընտանիքների նախնիներն էլ բնակություն են հաստատել Վարդաձորում Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի շրջանից (ցավոք հնարավոր չեղավ պարզել ստույգ, որ բնակավայրից), 1828-1830-ական թթ. գաղթի ժամանակ:*

*Առաջին Հմայիլը Արտաշես Գրիգորյանինն է, որի պապը՝ Անդրեյը, գաղթել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ տարածաշրջանից և իր հետ Վարդաձոր բերել հմայիլները: Ի սկզբանե դրանք երկուսն են եղել, դրանով պայմանավորված՝ սրբատեղին ուխտավորների կողմից կոչվել է «Անդրեյ հմայիլներ» (ցավոք, հմայիլներից մեկը ժամանակի ընթացքում կորսվել է): Հմայիլը և մատուռ-սրբատեղին պահպանելու նպատակով, պապը՝ Անդրեյը, սրբատեղին տան հետ միասին ժառանգում է կրտսեր դստերը՝ Հռիփսիկ Գրիգորյանին: Նա ամուսնու՝ Շամխալ Պետրոսյանի հետ Հմայիլը, իսկ ավելի ուշ նաև մատուռ-սրբատեղին,*

---

6 **Դ. Ղազարյան,** «15-րդ դարի ժապավենաձև հմայիլները», *ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջան, Արզական, 26-27 նոյեմբերի, 2011, Նստաշրջանի նյութեր,* Երևան, 2012, էջ 147, **Ф. Брокгаузъ, И. Ефронъ,** *Энциклопедический словарь*, Томъ 42, С.-Петербургъ, 1897, с 500.

7 **Դ. Ղազարյան,** *Ժապավենաձև հմայիլներ...,* էջ 8-9:

8 Մեր երախտագիտությունն ենք հայտնում Պետրոսյան և Սիրականյան ընտանիքներին՝ հնատիպերը մեզ սիրով տրամադրելու համար:

իր հայրական օջախի հետ միասին նվիրատվությամբ փոխանցում է միջնեկ որդուն՝ Համբարձում Շամխալի Պետրոսյանին, որը 1984 թ. սրբատեղիի հարակից մասում կիսագետնափոր մատուռ-սրբատեղին փոխարինում է նորակառույց քարե աղոթատնով: Այդ օրվանից Հմայիլը գտնվում է Համբարձում Պետրոսյանի և իր տիկնոջ՝ Ծաղիկ Պետրոսյանի անմիջական պահպանության ներքո:

Հմայիլը տպագրվել է 1716 թվին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում[9], իր իսկ ձեռքով: Այն 866,2× 9 սմ մեծության է, շարադրված է միասյուն բոլորգրով, շարվածքի չափը՝ 6,7 սմ է, երկու կողմերից ընդգծված զարդանախշ եզրագոտով: Հմայիլը կազմված է մեկ ամբողջական ժապավենաձև թերթից, որի համար գործածվել են իրար սոսնձած նույն երկարության թղթե կտորներ: Սոսնձումն այնքան հմտորեն է արված, որ անցումը հաջորդին գրեթե աննշմարելի է: Հմայիլը գրեթե պահպանել է ամբողջական տեսքը: Պահպանված վիճակից կարելի է կարծել, որ տպագիր Հմայիլը միայն սկզբում՝ «Ծնունդ» պատկերից առաջ ունի պակասավոր հատված, հավանաբար 5 սմ: Բնագիրը գրված է միայն առաջին երեսին: Շարադրանքի և պատկերների համար օգտագործված է սև ներկանյութը, սակայն որոշ պատկերներում առկա են բաց կարմիր, կանաչ, մուգ կապույտ, բաց շագանակագույն, մուգ սև գունաներկերը: Ընդհանուր առմամբ, հնատիպի վիճակը կարելի է բնորոշել բավարար: Այն գրեթե անվնաս է մեզ հասել, միայն ունի երեք պատռված հատված՝ Ներսես Շնորհալու պատկերի հատվածում՝ երկայնակի կտրված, եզրերի ծալված մասերում նշմարվում են մանր պատռվածքի հետքեր, հիշատակարանի վերջի 8 սմ հատվածում: Մնացած բոլոր մասերը անվնաս զուգակցված են: Հմայիլը բովանդակում է շուրջ 30 աղոթք՝ «Ներսես Շնորհալու աղոթք», «Սուրբ Հովհաննես Կարապետի աղոթք», «Սուրբ Ստեփաննոս Նախավկայի աղոթք», «Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթք», «Պահպանության աղոթք», «Պահպանության աղոթք», «Հրեշտակների պահպանության աղոթք», «Սրանք են հրեշտակների անունները», «Զար նազարի և չար լեզվի աղոթք», «Ճանապարհորդության աղոթք», «Զար նազարի և չար լեզվի աղոթք», «Զավակ ծնելու աղոթք», «Բարեխոսություն սուրբ թագավորներին», «Աբրահամի աղոթք», «Սուրբ Գևորգ զորավարի աղոթք», «Ղուկասի սուրբ Ավետարան», «Գլխացավի և աչքացավի աղոթք», «Մատթեոսի սուրբ Ավետարան», «Մարկոսի սուրբ Ավետարան», «Տերունական աղոթք», «Դևերի և կախարդների, և՛ աղանդավորներին կապելու,

---

9 Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին անվանի տպարանատեր-հրատարակիչ էր, որն իր տպարանը բացել է Կ. Պոլսում և 1700-1750 թթ., տպագրել բազմաբնույթ գրքեր, որոնցից նշենք «Նարեկ»-ը, «Ժամագիրք Ատենի»-ն, «Շարակնոց»-ը, Առաքել Սյունեցու «Ադամագիրք»-ը և այլն: **Գ. Ստեփանյան,** *Կենսագրական բառարան (Հայ մշակույթի գործիչներ),* երեք հատորով, հ. Ա. (Ա-Թ), Երևան, 1973, էջ 121:

հանուն դատաստանին հաջողելու, և՛ քաղցրության, և՛ երեսբախտության աղոթք», «Սուրբ կույս Մարիամ Աստվածածնի աղոթք», «Սուրբ Սարգիս զորավարի աղոթք», «Գրիգոր Նարեկացու աղոթք», «Նարեկացու աղոթք», «Հովհաննեսի Ավետարան», «Դևերին կապելու աղոթք», «Թղպայ և ալի աղոթք», «Աղոթք վաճառի և տալէհի, և Սթարայի...»:

Հմայիլը հարուստ է նկարազարդումներով: Աղոթքներին նախորդում են բովանդակությանը վերաբերող պատկերներ: Բաղկացած է շուրջ 32 փորագրապատկերից, որից 26 աստվածաշնչյան բնույթի, Ծնունդ, Ընծայումն տաճարին, Քրիստոսի տոհմածառը, Սուրբ երեք մանկունք, Ներսես Շնորհալի, կիսախորան, Հովհաննես Կարապետ, Ստեփաննոս Նախավկա, Գրիգոր Լուսավորիչ, Գաբրիել հրեշտակապետը հանգուցյալի հոգին տանելիս, Աբրահամի զոհաբերությունը, Սուրբ Գևորգ զորավար, Ղուկաս ավետարանիչ, բուսական գլխազարդ, Հիսուս Քրիստոսի բժշկումը, Սերովբե, Մատթեոս ավետարանիչ, բուսական գլխազարդ, Մարկոս ավետարանիչ, բուսական գլխազարդ, Հայր Աստված, Գառն Աստծո, Տասներկու առաքյալներ, Հարուցյալ Քրիստոսը և տանջանքների գործիքները, Քրիստոսի գերեզմանը, խաչելությունը, վերևում՝ «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից» մակագրությամբ, բուսական գլխազարդ, Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին, Ջիավոր սուրբ Սարգիսը և որդին՝ Մարտիրոսը, Գրիգոր Նարեկացի, Հովհաննես ավետարանիչ, Սողոմոն Իմաստունը սաստում է սատանային: Այստեղ՝ փորագիր պատկերների գեղարվեստական հարդարանքում ակնառու են ձեռագիր հմայիլների մանրանկարների ազդեցությունները:

Բնագիրն ավարտվում է կանոնական դարձած տպագիր հիշատակարանով՝ «Աստուած վայելումն տացէ / Այս Հէմայիլս, որ գրված է, / Հայրք եւ եղբայրք, որ սայ առցէ, / Խաղաղութեամբ վայելեսցէ, / Ոչ չար իւրքն պատահեսցէ, / Խորհուրդ բարին կատ[արեսցէ], / Ի խորին ձերութիւն հասցէ, / Հայր մեղայիւ զմեզ յիշեսցէ, / Եւ յետ աստեացս, որ նայելցէ, / Արքայութիւն ժառանգեսցէ:

Գրեցաւ Հէմայիլըս ի թվին Հայոց ՌՃԿԵ. (1716) ապրիլի Ի. (20)», որից պարզ է դառնում Հմայիլի տպագրության թվականը: Իսկ ավելի ուշ՝ հետագայի ձեռքով գրված հիշատակարանի առկայությունը. «Գրեցաւ Համայիլ ի վայելում յանուն Թազագուլին, որդուն՝ Մալխասին, միւուս որդուն՝ Մխիթարին, եւ հանգուցեալ որդուն՝ Գալուստին, Սարգսին: Գրեցաւ ձեռամբ տիրացու Հօհանին» փաստում է, որ Հմայիլի տերերն են եղել Թազագուլը և վերջինիս որդիները՝ Մալխասը, Մխիթարը, որտեղ վկայված են նաև հանգուցյալ որդիները՝ Գալուստը, Սարգիսը:

Երկրորդ հնատիպ Հմայիլը Վարդաձոր համայնքի մեկ այլ բնակիչ՝ Ալեքսան Սիրականյանի ընտանիքինն է, որն այսօր գտնվում է միջնեկ որդու՝ Վարդգես

Սիրականյանի տանը: Հմայիլի ձեռքբերման նախապատմությունն անհայտ է ընտանիքի անդամների համար, միակ հայտնի տեղեկությունը Հմայիլի Արևմտյան Հայաստանից բերված լինելն է: Հմայիլն առանձնակի նշանակություն ունի ընտանիքի անդամների համար: Այն լավագույնս պահելու նպատակով՝ տան առաջին հարկում կառուցվել է աղոթատուն: Սրբատեղին հասանելի է ոչ միայն ընտանիքի անդամների, այլև տեսնել ցանկացողների համար: Վարդգես Սիրականյանի կնոջ՝ Ռուզան Սիրականյանի պնդմամբ, Հմայիլն ունի բուժիչ հատկություն, և հաճախակի են դեպքերը, երբ հիվանդություն ունեցող մարդիկ ապաքինվել են նրա բժշկելու կարողության շնորհիվ: Տեղացիները հավատացած են, որ այն օգնում է նաև վախերը հաղթահարելու գործում: Այդ նպատակով այն ավանդական եղանակով դնում են բարձի տակ կամ հպում մարմնի վնասված հատվածին՝ ցավերը մեղմելու համար:

Հմայիլը տպագրվել է 1717 թ. Կ. Պոլսում՝ դարձյալ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում[10]: Ժապավենաձև մեկ թերթը ստացվել է բազմաթիվ թղթե կտորների սոսնձման արդյունքում: Հմայիլի մեծությունը 726,50x10,7 սմ է: Բնագիրը շարադրված է միասյուն բոլորգրով, գրադաշտի մեծությունը՝ 726,50x7,7 սմ: Շարադրանքը ամբողջովին տպագրված է բոլորգրով, իսկ որոշ խորագրեր և սկզբնատողեր ընդգծված են գլխագրերով: Բնագիրն ու նկարազարդումներն աջ և ձախ կողմերից առնված են բուսական ծաղկանախշ շրջանակի մեջ: Չնայած հմայիլի սկզբից (առնվազն 5 սմ) և վերջից (անորոշ չափով) պակասավոր լինելուն՝ տպագրի ընդհանուր վիճակը կարելի է գնահատել բավարար: Եզրերը տեղ-տեղ մաշված են, որոշ հատվածներ մասամբ պատռված, ստորին հատվածը՝ 9 սմ՝ սոսնձից անջատ, գրադաշտին՝ կեղտաբծեր, մոմի հետքեր: Մոմի հետքերը վկայությունն են այն բանի, որ Հմայիլը հաճախակի կիրառվել է զանազան ծիսական արարողությունների ժամանակ՝ աղոթքների ընթերցման նպատակով: Աղոթքների քանակը բնագրում 27-ն է, բովանդակում է՝ «Ներսես Շնորհալու աղոթք», «Տերունական աղոթք», «Դևերի և՛ կախարդների, և՛ աղանդավորներին կապելու, և՛ հանուն դատաստանի հաջողելու, և՛ քաղցրության, և՛ երեսբախտության աղոթք», «Սուրբ կույս Մարիամ Աստվածածնի աղոթք», «Սուրբ Հովհաննես Կարապետի աղոթք», «Սուրբ Ստեփաննոս Նախավկայի աղոթք», «Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթք», «Պահպանության աղոթք», «Պահպանության աղոթք», «Հրեշտակների պահպանության աղոթք», «Սրանք են հրեշտակների անունները», «Աղոթք գլխացավի և աչքա-

---

10 Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս **Թէոդիկ**, *Տիպ ու տառ*, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 56-57:
Այս բացահայտման հեղինակն է Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, ավանդապահ Դավիթ Ղազարյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը մասնագիտական օգնության և անհրաժեշտ գրականության տրամադրման համար:

*ցավի», «Չար նազարի և չար լեզվի աղոթք», «Ճանապարհորդության աղոթք», «Չար նազարի և չար լեզվի աղոթք», «Սուրբ Թագավորների բարեխոսություն», «Աբրահամի աղոթք», «Գրիգոր Նարեկացու աղոթք», «Նարեկացու աղոթք», «Սուրբ Գևորգ զորավարի աղոթք», «Սուրբ Սարգիս զորավարի աղոթք», «Մատթեոսի սուրբ Ավետարան», «Մարկոսի սուրբ Ավետարան», «Ղուկասի սուրբ Ավետարան», «Հովհաննեսի սուրբ Ավետարան», «Զավակ ծնելու աղոթք», «Դևերին և տլաց կապելու աղոթք»:*

*Հմայիլն առանձնանում է իր հարուստ նկարազարդումներով: Բովանդակության համեմատ, նկարազարդումները գերակշռում են, ընդգրկում է՝ Ադամը և Եվան դրախտում, Ավետում, Ծնունդ, Ընծայումը տաճարին, Քրիստոսի տոհմածառը, Սուրբ երեք մանկունք, Սուրբ Ներսես Շնորհալի, կիսախորան, Հայր Աստված, Տասներկու առաքյալները, Գառն Աստծո, Հարուցյալ Քրիստոս և տանջանքների գործիքները, Քրիստոսի գերեզմանը, Խաչելություն, բուսական գլխազարդ, Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին, Հովհաննես Կարապետ, Ստեփաննոս Նախավկա, Գրիգոր Լուսավորիչ, Գաբրիել հրեշտակապետը՝ հանգուցյալի հոգին տանելիս, Սերովբե, Աբրահամի զոհաբերությունը, Գրիգոր Նարեկացի, Սուրբ Գևորգ զորավար, Ձիավոր Սուրբ Սարգիսը և որդին՝ Մարտիրոսը, Մատթեոս ավետարանիչ, բուսական գլխազարդ, Մարկոս ավետարանիչ, բուսական գլխազարդ, Ղուկաս ավետարանիչ, Հովհաննես ավետարանիչ, բուսական գլխազարդ, Սողոմոն Իմաստունը սաստում է սատանային:*

*Աղոթքների գլխագրերը հաճախ ընդգծված են զարդագրերով: Զարդագրերից հիմնականում գործածված է թռչնագիրը՝ թռչուն-ձուկ-վիշապ, թռչուն-ձուկ համադրությամբ: Հմայիլի ճոխ նկարազարդումն ընդօրինակված է միջնադարյան ձեռագիր մանրանկարչությունից, ինչն ընդունված էր և ցայտուն կերպով արտահայտվել է այս երկու հնատիպ հմայիլներում*[11]*:*

*Այսպիսով, նորահայտ երկու հնատիպ հմայիլներն առաջին անգամ են արժանացել ուսումնասիրության, իսկ դրանցում զետեղված աղոթքներն ու դրանց բնորոշ նկարազարդումներն ամբողջացնում են մեր պատկերացումները 18-րդ դարի հնատիպերի բովանդակության, գեղարվեստական առանձնահատկությունների և տպագրական ուրույն ոճի մասին: Արդյունքում հայերեն հնատիպ հմայիլների քանակը՝ 117 միավոր, համալրվեց ևս երկուսով՝ հասնելով 119-ի՝ հարստացնելով հնատիպերի համեստ գանձարանը:*

*Ստորև ներկայացված է հմայիլների ընդհանուր նկարագրությունը՝ ըստ տարեթվերի աճման կարգի:*

---

[11] Հմայիլի օրինակներից պահպանվում է ՄՄ անվան Մատենադարանի գրադարանում (հնատիպ հմայիլ 38, թերի օրինակներ՝ հնատիպ հմայիլներ 6, 7, 30, 40, 41, 43): **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան,** *Հայ գիրքը 1512-1800 թվականներին,* Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 224, հմր. 300:

## 1
## ՀՆԱՏԻՊ ՀՄԱՅԻԼ

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ՝ [Կ. Պոլիս] ՌՃԿԵ. – 1716

ՏՊԱԳՐԻՉ՝ [Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի]: ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐԻՉ՝ Գրիգոր Մարզվանեցի: ՀԵՏԱԳԱ ՍՏԱՅՈՂ՝ Սաֆար, Մխիթար, Մալխաս:

ԹԵՐԹ՝ 1 (ժապավենանև): ՆՅՈՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 866,2x8,3 սմ: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն, սև եզրագոտիով սահմանագծված՝ 6,7 սմ: ԳԻՐ՝ բոլորգիր:

ՆԿԱՐՆԵՐ – Զարդագրեր՝ թոչնագիր, թոչուն-ձուկ, կենդանագիր: ԳՈՒՅՆԵՐ (հետագա գունավորման)՝ կարմիր, կապույտ, կանաչ, սև, շագանակագույն:

ՎԻՃԱԿ՝ բավարար: Սկզբից թափված, եզրերը մասամբ մաշված, որի հետևանքով մանր պատռվածքներ, որոշ հատվածներ իրարից անջատ, մասամբ կեղտաբծեր, խոնավության և մոմի հետքեր, վերջից 8 սմ պատռված:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐՆԵՐ

1. Ծնունդ՝ «Ծնունդն Յիսուսի Քրիստոսի» մակագրությամբ
2. Ընծայումն տաճարին՝ «Քառասնօրեայ ի տաճարն» մակագրությամբ
3. Քրիստոսի տոհմածառը՝ «Յերկոյտասան նահապետաց շառաւիղեալ մայրն կենաց» մակագրությամբ
4. Սուրբ երեք մանկունք՝ «Սուրբ Իրեք Մանկունքն» մակագրությամբ
5. Ներսես Շնորհալի
6. Կիսախորան

Ա. Աղօթք տեառն Ներսէսի հայրապետին է ասացել (այլ գրով՝ «օգնական Սաֆարին») – *Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ՝ Հայր եւ Որդի, եւ Սուրբ Հոգի... եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

7. Հովհաննես Կարապետ

Բ. Աղօթք սրբոյն Յովաննու Կարապետին – *Այլեւ բարեխօսութեամբ Յովհաննու Կարապետին... եւ ամենայն սուրբ մարգարէիցն պահեայ եւ փրկեայ զծառայս քո (այլ ձեռքով՝ «Մխիթար[ին], Մալխասին»:*

8. Ստեփաննոս Նախավկա

Գ. Աղօթք սրբոյն Ստեփաննոսի Նախավկային – *Ի քէն հայցեմք արտասագին, / Նախավկայ Տեառն արարչին... Արթուն լինել առաւօտին, / Բարբանել զլոյսն անքննին:*

9. Գրիգոր Լուսավորիչ

Դ. Աղօթք սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին – *Խնդրեմք ի քէն, հա՛յր պատուական, / Լուսաւորիչ ազգի մարդկան... Ի բանսարկուէն ըզմեզ փրկեա՛, / Եւ ի բարին առաջնորդեայ. ամէն:*

Ե. Աղօթք պահպանութեան – *Հայր սուրբ, սրբեա՛ զիս... եւ յամենայն չարէ պահեա ծառայիս քո (այլ ձեռքով՝ «Մխիթարին»):*

Զ. Աղօթք պահպանութեան – *Տէ՛ր Յիսուս, դու ես օգնական իմ, եւ ի ձեռս քո եմ յամենայն ժամ... եւ քեզ փառք եւ զօրութիւն, այժմ եւ անվաղճան յամենայն. ամէն:*

10. Գաբրիել հրեշտակապետը հանգուցյալի հոգին տանելիս

Է. Աղօթք հրեշտակաց պահպանութեան. ամէն – *Գաբրիէլ, Միքաէլ, Ռափայէլ, Դակուէլ... եւ փայտ դառնայ ի դիմաց ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Մալխասին)՝ օգնական եւ պահապան եղիցի. ամէն:*

Ը. Այս են անունք հրեշտակաց – *Սարսիէլ, Սարակմիէլ, Գուրիէլ, Գանձիէլ... ուր այս անունքս յիշեն. անդ ոչ մերձենամք ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Մխիթարին») օգնական եւ պահապան. ամէն:*

Թ. Աղօթք չար նազարի եւ չար լեզվի. ամէն – *Հրանիւթ, Հրափահրատն, Համատուն, Համակէզ, որ էք սպասաւորք Աստուծոյ... խաւար դառնա ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Մալխասին»)՝ օգնական եւ պահապան եղիցի. ամէն:*

Ժ. Աղօթք վասն ճանապարհորդաց – *Կենամանուէլ, Կենդանամաէլ, որ էք ըսպասաւորք Աստուծոյ, Դուք ճանապարհորդակից լերուք ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Սաֆարին»)... այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Մխիթարին»):*

ԺԱ. Աղօթք չար նազարի եւ չար լեզվի – *Տէ՛ր Աստված մարդասէր, մարդասիրի Հօր Որդի, դու պահապան եւ օգնական... եւ փրկեա՛ զծառայս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Մալխասին») օգնական եղիցի եւ պահապան. ամէն (այլ ձեռքով՝ «Սաֆարին»):*

ԺԲ. Աղօթք վասն զավակ ծնելոյ – *Նայեա՛յ յաղաչանըս ծառայիս քո եւ աղախնոյս, որպէս հաճեցար յաղաչանս Աննայի... յիշէ՛ զնեղութիւն վասն խնդութեան, զի ծնաւ մարդ յաշխարհ:*

ԺԳ. [Աղաւթք առ սուրբ թագաւորսն] – *Այլեւ բարեխօսութեամբ սուրբ թագաւորացն Եզեկիայ, Սեդեկիայ... եւ փրկեա զծառայս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Մխիթարին, Մալխասին») եւ պահապան ամենայն չարէ պահեսցէ. ամէն:*

11. Աբրահամի զոհաբերությունը (հրեշտակը ամպերի վրա, անկյունում՝ «ԳՐ-ԳՐԻԳՈՐ»)

ԺԴ. [Աղօթք սուրբ հօրն Աբրահամու] – *Եւ էառ Աբրահամ զորդին իւր զՍահակ եւ տարաւ ի զենելիս իւր... ողորմեա՛ Քրիստոս Աստուած ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Թազագուլին» օգնական եղիցի եւ պահապան յամենայն ժամ. ամէն:* (այլ ձեռոով՝ «Սաֆարին»):

Ծնթ. վերջում հատված Սաղմոսից՝ «Ապրեցո զիս, Տէր, ի մարդոյ չարէ... եւ մխիթարեցեր զիս. ամէն»:

12. Գևորգ զորավար

ԺԵ. Աղօթք սրբոյ Գէորգայ զօրավարին – *Բարեխօսութեամբ սուրբ զօրավարացն սրբոյն Գէորգայ զօրավարին եւ Մեռկեռիոսի զինաւորին... օգնական եղիցի եւ պահապան ամենայն չարէ պահեսցէ. ամէն (այլ ձեռքով՝ «Սաֆարին»):*

13. Ղուկաս ավետարանիչ

14. Բուսական գլխազարդ

ԺԶ. Սրբոյ Աւետարան ըստ Ղուկասու. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Եւ էջ ի Կափառնաում՝ ի քաղաքն Գալիլեացւոց... զի գիտէին զնա, թէ Քրիստոսն է (Գլուխ Դ. 31-42): Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր:*

15. Հիսուս Քրիստոսի բժշկումը՝ «Տէրն մեր Յիսուս Քրիստոս մեռեալին Յարուցանէր եւս բազումս բժշկէր» (այլ ձեռոով՝ ձեռագրով՝ «ծառայիս Աստուծոյ՝ Մխիթարին, Մալխասին, Սաֆարին») մակագրությամբ

16. Սերովբե, վերևում՝ «ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ / ՍՈՒՐԲ ՏԷՐ» մակագրությամ

ԺԷ. Աղօթք գլխացաւի եւ աչից ցաւի – *Գայր գետն ի Յորդանան եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական... օգնական եղիցի եւ պահապան ամենայն:*

17. Մատթեոս ավետարանիչ

18. Բուսական գլխազարդ

ԺԸ. Սրբոյ Աւետարան ըստ Մաթէոսի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Եւ ելեալ անտի Յիսուս՝ գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի... օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Թազագալի», Գլուխ ԺԵ 21-28). ամէն:*

19. Մարկոս ավետարանիչ

20. Բուսական գլխազարդ

ԺԹ. Սրբոյ Աւետարան ըստ Մարկոսի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Եւ նոյնժամայն ճեպեաց զաշակերտսըն մտանել ի նաւ... եւ որք մի անգամ մերձեցան, փրկեցան: Փա՛ռք քեզ՝ Տէր Աստուած մեր: (այլ ձեռքով՝ «օգնական եւ պահապան ծառայիս Աստուծոյ՝ «Սֆարին», Գլուխ 45-56): Ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ Մխոին») օգնական եւ պահապան եղիցի եւ յամենայն չարեաց պահեսցէ եւ ազատեսցէ յամենայն ժամ. ամէն:*

Ի. [Աղօթք առ Մարիամ Աստուածածին] – *Ողջոյն քեզ, Մարիամ՝ լի շնոր-*

*հօք... Բարեխօս լիցի ծառայիս աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Թազագուլին»):*

21. Հայր Աստված. «Հայրն Աստուած, արարիչն ամենայնի՝ երկնի եւ երկրի ստեղծող, օգնական լեր» (այլ ձեռքով՝ «Մալխասին») մակագրությամբ

22. Գառն Աստծո. «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ողորմեա՛յ ծառայիս Աստուծոյ» (այլ ձեռքով՝ «Մխիթարին») մակագրությամբ

23. Հիսուսի տասներկու առաքյալներ (երկու շարքով, վեցական ամեն շարքում)՝ «Երկոյտասան առաքեալքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. բարեխօս լերուք ծառայիս Աստուծոյ» (այլ ձեռքով՝ «Մխիթարին, Մալխասին, ծնողաց՝ Թազագուլին, Սաֆի[ն]») մակագրությամբ

24. Հարուցեալ Քրիստոսը և տանջանքների գործիքները՝ «Քրիստոս ըսկուն մէջն պատարագի, որ բառանայ զմեղս աշխարհի: Սուրբ մարմին եւ արիւն Տեառն, օգնական լեր ծառայիս Աստուծոյ», գլխավերեւում՝ «ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԵԻՑ» մակագրությամբ

25. Քրիստոսի գերեզմանը՝ «Քրիստոսի գերեզմանն է... եւ ծառայս քո՝ Մալխասին» մակագրությամբ

ԻԱ. Աղօթք տէրունական – *Հայր մեր, որ յերկինսդ ես... ողորմեա՛յ եւ պահեա՛ ամենայն չարեաց եւ աղանդաւորաց ի դիմաց ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Մխիթարին»):*

26. Խաչելություն՝ «Խաչելութիւն Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուս Քրիստոսի...» մակագրությամբ, (Քրիստոսի գլխավերևում՝ «ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԵԻՑ», ներքևում՝ «ԳՄ-ԳՐԻԳՈՐ ՄԱՐԶՎԱՆԵՑԻ» մակագրությամբ

27. Բուսական գլխազարդ

ԻԲ. Աղօթք կապանաց դիւաց, եւ կախարդաց եւ աղանդաւորաց, եւ վասն դատաստանի աջողելոյ, եւ վասն խաղցրութեան եւ երեսբախտութեան. ամէն (այլ ձեռքով՝ «Սաֆարին») – *Թագաւոր հրեշտակաց, ապաւէն ծառաւելոց, փրկիչ նեղելոց... Ոչ երկիցես դու յերկիւղէ ի գիշերի եւ ոչ ի նետէ, որ թռչի ի տուէ (այլ ձեռքով՝ «Սաֆարին»):*

28. Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին

ԻԳ. Աղօթք սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին. ամէն (այլ ձեռքով՝ «Սաֆարէն») –*Աստուածածին ամէնօրհնեալ, / Ըզպաղատանս մեր ընկալ... Առ Բանն Աստուած բարեխօս լեր, / Ի փորձանաց զմեզ փրկել, ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Մալխասին») օգնական եւ պահապան լեր. ամէն (չապածո, 2 քառյակ):*

29. Ջորավար սուրբ Սարգիսը և որդին՝ Մարտիրոսը

ԻԴ. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին – *Երջանիկ, մեծ զօրական, / եւ Քրիստոսի յաղթող վկայն... Ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Թաղատին, Սաֆարին»)՝ օգնական եւ պահապան եղիցի. ամէն:*

30. Գրիգոր Նարեկացի

ԻԵ. Աղօթք Նարեկացոյ է ասացեալ՝ ի ձեռն Որդոյն Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Օգնական եւ պահպան Սաֆարին») – *Որդի Աստուծոյ կենդանոյ, օրհնեալդ յամենայնի... օգնական եւ պահապան եղիցի ամենայն չարէ պահեսցէ. ամէն (Գ. Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, Բան ԽԱ.):*

ԻԶ. Աղօթք Նարեկացոյ ասացեալ – *Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս... նշանաւ Սուրբ խաչիւն իւր, ով անուամբ Հօր եւ Որդւոյ Հոգոյն (Գ. Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, Բան ԺԲ.):*

31. Հովհաննես ավետարանիչ (ներքևում՝ «ԳՐ-ԳՐԻԳՈՐ»)

ԻԷ. Աւետարան ըստ Յոհաննու. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Յետ այսորիկ գընաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլեացւոց՝ Տիբերեայ... եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Թազագուլին») յամենայն չարեաց պահեսցէ. ամէն (Գլուխ Զ. 1-14):*

32. Սողոմոն Իմաստունը սաստում է սատանային

ԻԸ. Աղօթք կապանաց դիւաց – *Սողոմոն Իմաստուն ետես զիշխանն դիւաց... Զճանապարհս քո Տէր ցուց ինձ եւ զշաւիղս քո ուսոյ ինձ:*

ԻԹ. Աղօթք Թպղայի եւ ալի – *Սուրբն Սիօվն, սուրբն Սիսի եւ սուրբն Սիսիանէ... յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Լ. Աղօթք վասն վաճառի եւ Ալէհի, եւ Սթարայի... – *Յայնժամ բացան երկինք, եւ ելին հրեշտակք... ի լրումն փառօք եւ պատուօք ի դէմ ծառայիս Աստուծոյ. ամէն:*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Բնագրի վերջում. Աստուած վայելումն տացէ այս Հէմայիլս, որ գրված է, / Հայրբ եւ եղբայրբ, որ սայ առցէ, / Խաղաղութեամբ վայելեսցէ, / Ոչ չար իւրքն պատահեսցէ, / Խորհուրդ բարին կատ[արեսցէ], / Ի խորին ձերութիւն հասցէ, / Հայր մեղայիւ զմեզ յիշեսցէ, / Եւ յետ աստեացս, որ նայելցէ, / Արքայութիւն ժառանգեսցէ:

Գրեցաւ Հէմայիլքս ի թվին Հայոց ՌՃԿԵ. (1716) ապրիլի Ի. (20):

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ**

3-րդ մանրանկարի վերջում (ԺԸ դ., նոտրգիր)՝ Ով սքրբուհի կոյս Մարիամ, ճիւղ օրհնութեան եւ ծառ կենաց անուանեցեր բերելով մեզ զպտուղն անմահութեան, հայցեմք ի քէն՝ բարեխօս լեր ծառայից Աստուծոյ՝ Սաֆին:

Վերջում (ԺԸ դ., նոտրգիր)՝ Գրեցաւ Համայիլ ի վայելում յանուն Թազագուլին, որդուն՝ Մալխասին, միւուս որդուն՝ Մխիթարին, եւ հանգուցեալ որդուն՝ Գալուստին, Սարգսին: Գրեցաւ ձեռամբ տիրացու Հ̲օհանին:

*Ծնթ.՝ Երկու հմայիլների նկարագրության դեպքում էլ արաբական թվերով նշված են նկարները, տառերով՝ բնագրերը:

## 2
## ՀՆԱՏԻՊ ՀՄԱՅԻԼ

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ՝ Կ. Պոլիս ՌՃԿԶ. – 1717

ՏՊԱԳՐԻՉ՝ [Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի]: ՓՈՐԱԳՐԱՆԿԱՐԻՉ՝ Գրիգոր Մարզվանեցի: ԹԵՐԹ՝ 1 (ժապավենաձև): ՆՅՈՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 726,50×10,7 սմ: Շարվածք՝ 7,7 սմ: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն: ԳԻՐ՝ բոլորգիր:

ՆԿԱՐՆԵՐ – Զարդագիր՝ թոչնագիր, թոչուն-ձուկ: Գույներ՝ հետագայում մատիտով՝ կարմիր, դեղին, սև:

ՎԻՃԱԿ՝ բավարար: Եզրերը մաշված, որոշ հատվածներ մասամբ պատռված, ստորին հատվածը՝ 9 սմ սոսնձից պոկված: Գրադաշտին՝ կեղտաբծեր, մոմի հետքեր: Վերջը՝ թափված:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐՆԵՐ**

1. Ադամը և Եվան դրախտում՝ «Մերկանալն Ադամայ եւ Եւայի» մակագրությամբ
2. Ավետումն Գաբրիելի՝ «Աւետիքն Գաբրիէլի» մակագրությամբ
3. Ծնունդ՝ «Ծնունդն Յիսուսի Քրիստոսի» մակագրությամբ
4. Ընծայումն տաճարին՝ «Քառասնօրեայ ի տաճարն» մակագրությամբ
5. Քրիստոսի տոհմածառ՝ «Յերկոտասան Նահապետաց շառ[ա]փղեալ մայրն կենաց» մակագրությամբ
6. Սուրբ Երեք մանկունք՝ «Սուրբ Իրեք Մանկունքն» մակագրությամբ
7. Ներսես Շնորհալի
8. Կիսախորան

Ա. Աղօթք տեառն Ներսէսի հայրապետին է ասացեալ – *(այլ ձեռքով՝ «Մարգրտին») Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ... եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Պազօին») օգնական և պահապան եղիցի և յամենայն չարեաց պահեսցէ և ազատեսցէ. Ամէն:

Բ. [Աղօթք առ Մարիամ Աստուածածին] – *Ողջոյն քեզ, Մարիամ՝ լի շնորհօք... Բարեխօս լեր մայր Աստուծոյ, ծառայիս քո այս անուն՝ (այլ ձեռքով՝ «Պազօին»)։*

9. Հայր Աստված՝ «Հայր Աստուած՝ արարիչն ամենայն երկնի և երկրի ստեղծող: Օգնական լեր և պահապան fo ձեռագործ ըստեղծվածին. (այլ ձեռքով) ամէն» մակագրությամբ

10. Քրիստոսի տասներկու աշակերտներ՝ «Երկոտասան առաքելքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, Բարեխօս լերուք ծառայիս Աստուծոյ՝ «Պազօին<ին>» մակագրությամբ

11. Գառն Աստծո՝ «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ողորմեա՛յ ծառայիս Աստուծոյ Պազօին» (անունը՝ այլ ձեռքով) մակագրությամբ

12. Հարուցյալ Քրիստոսը և տանջանքների գործիքները՝ «Քրիստոս ըսկուն մէջն Պատարագի, որ բառնա զմեղս աշխարհի սուրբ մարմին եւ արիւն Տեառն, օգնական լե՛ր ծառայիս Աստուծոյ [Մ]արիամին» (անունը՝ այլ ձեռքով) մակագրությամբ

13. Քրիստոսի գերեզմանը՝ «Քրիստոսի գերեզմանն է... եւ զծառայիս fo Շահպազին, Հարութին» (անունները՝ այլ ձեռքով) մակագրությամբ

Գ. Աղօթք տէրունական – *Հայր մեր, որ յերկինսդ ես, Սուրբ եղիցի անուն քո... Ողորմեա՛յ եւ պահեա՛յ ամենայ չարեաց եւ աղանդաւորաց ի դիմաց ծառայիս Աստուծոյ (անունը՝ ջնջված)։*

14. Խաչելություն՝ «Խաչելութիւնն Քրիստոսի, Օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ՝ Շուշան, Հարութէնին» մակագրությամբ, վերևում՝ «ՅՆԹՀ- ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՅԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԵԻՅ» մակագրությամբ

15. Բուսական գլխազարդ

Դ. Աղօթք կապանաց դիւաց եւ կախարդաց, եւ աղանդաւորաց, եւ վասն դատաստանի աջողելոյ, եւ վասն բաղցրութեան, եւ երեսբախտութեան. ամէն – *Թագաւոր հրգոր, ապաւէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց, որ վասն մեր խոնարհեցար ի հայրական ծոցոյ... եւ ոչ ի նեռէ, որ թռչի ի տուէ «Հարութէնին» (անունն՝ յետագայի ձեռքով)։*

16. Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին՝ ձվածիր փառապսակի մեջ

Ե. Աղօթք սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին. ամէն – *Աստուածածին ամէնօրհնեալ, Ըզպաղատանս մեր ընկալ... օգնական եւ պահապան լեր ամենայն ժամ. ամէն (չափածո, 2 քառեակ)։*

17. Հովհաննես Մկրտիչ

Զ. Աղօթք սրբոյն Յովաննու Կարապետին – *Այլեւ բարեխօսութեամբ սրբոյն Յովաննու Կարապետին... պահեա՛յ եւ փրկեա՛յ զծառայս քո «///նտին»։*

18. Ստեփաննոս Նախավկա

Է. Աղօթք սրբոյն Ստեփաննոսի Նախավկային – *Ի քէն հայցեմք արտասուագին, / Նախավկայ Տեառն արարչին... Բարբանեալ զլոյսն անքննին։*

19. Գրիգոր Լուսավորիչ

Ը. Աղօթք սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին – *Խընդրեմք ի քէն, հա՛յր պատուական... եւ ի բարին առաջնորդեայ. ամէն։*

Թ. Աղօթք պահպանութեան – *Հայր սուրբ, սրբեա՛յ զիս, Որդիա սուրբ, պահեա՛յ զիս... ընդ հրեշտակս քո յամենայն չարէ պահեա՛ զծառայս քո (անունը՝ ջնջուած)։*

Ժ. Աղօթք պահպանութեան – *Տէ՛ր Յիսուս, դու ես օգնական իմ... եւ քեզ փառք եւ զօրութիւն այժմ եւ անվաղճան յամենայն. ամէն։*

20. Գաբիրել հրեշտակը հանգուցեալի հոգին տանելիս

ԺԱ. Աղօթք հրեշտակաց պահպանութեան. ամէն – *Գաբրիէլ, Միքաէլ, Ռափէլ, Դակունէլ... օգնական եւ պահապան եղիցի. ամէն։*

ԺԲ. Այս են անունք հրեշտակաց – *Սարսիէլ, Սարակմիէլ, Գուրիէլ, Գանձիէլ... անդ ոչ մերձենամք ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով «Շահպազին, Հարութին»)։*

21. Սերովբե, վերևում՝ «ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ / ՍՈՒՐԲ ՏԷՐ» մակագրությամբ

ԺԳ. Աղօթք գլխացաւի եւ աչից ցաւի – *Գայր գետն ի Յորդանան, եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական... օգնական եղիցի եւ պահապան. ամէն։*

ԺԴ. Աղօթք չար նազարի եւ չար լեզվի. ամէն – *Հրանիթ, Հրափաէլ [Հ]-րատն, Համատուն, Համակէզ, որ էք սըպասաւորք Աստուծոյ... խաւար դառնա ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով «Էլբուհասին»)՝ օգնական եւ պահապան եղիցի. ամէն։*

ԺԵ. Աղօթք վասն ճանապարհորդաց – *Կենամանուէլ, Կենդանամաէլ, որ էք ըսպասաւորք Աստուծոյ, Դուք ճանապարհորդակից լերուք ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով «Աստուածատուրին»)... այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

ԺՁ. Աղօթք չար նազարի եւ չար լեզվի – *Տէ՛ր Աստված մարդասէր, մարդասիրի Հօր Որդի... եւ փրկեա՛ զծառայիս Աստուծոյ (անունը՝ ջնջուած) օգնական եղիցի եւ պահապան. ամէն (այլ ձեռքով՝ «Հարութիւն անունս»):*

ԺԷ. [Բարեխօսութիւն սրբոց Թագաւորաց] – *Այլեւ բարեխեսութեամբ սուրբ թագաւորացն Եզեկիայ, Սեդեկիայ... եւ արա՛ առիս զնշան բարութեան:*

22. Աբրահամի զոհաբերությունը (հրեշտակը ամպերի վրա)

ԺԸ. [Աղօթք սուրբ հօրն Աբրահամու] – *Եւ էառ Աբրահամ զորդին իւր՝ զՍահակ, եւ տարաւ ի զենելիս իւր... օգնական եւ պահապան եղիցի ամենայն ժամ. ամէն:*

23. Գրիգոր Նարեկացի

ԺԹ. Աղօթք Նարեկացոյն է ասացեալ՝ ի ձեռն Որդոյն Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Հարութին») – *Որդի Աստուծոյ կենդանոյ, օրհնեալդ յամենայնի... Ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով՝ «Պազոին, Շուշանին») օգնական եւ պահապան եղիցի. ամէն (այլ ձեռքով՝ «Սիմէին», Գ. Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, Բան ԽԱ.):*

Ի. Աղօթք Նարեկացոյ է ասացեալ – *Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս... օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ (անունը՝ ջնջուած). ամէն (Գ. Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, Բան ԺԲ.):*

24. Գևորգ զորավար

ԻԱ. Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին (այլ ձեռքով՝ «Հարութ») – *Բարեխօսութեամբ սուրբ զօրավարացն սրբոյն Գէորգայ զօրավարին եւ որդոյն նորա՝ Մարտիրոսին... եւ պահապան ամենայն չարէ պահեսցէ. ամէն:*

25. Ձիավոր սուրբ Սարգիսն ու որդին՝ Մարտիրոսը

ԻԲ. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին (այլ ձեռքով՝ «Հարութին, Խչօին») – *Երջանիկ մեծ զօրական, / Եւ Քրիստոսի յաղթող վրկայն... Ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Հարօին»)՝ օգնական եւ պահապան եղիցի. ամէն:*

26. Մատթեոս ավետարանիչ

27. Բուսական գլխազարդ

ԻԳ. Սրբոյ Աւետարան ըստ Մաթէոսի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Եւ ելեալ անտի Յիսուս՝ գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի... Փա՛ռք քեզ, Տէ՛ր Աստուած, օգնական եւ պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ՝ (այլ ձեռքով, այլ թղթի վրա՝ «Ալվանտին»). ամէն:*

28. Մարկոս ավետարանիչ

29. Բուսական գլխազարդ

ԻԴ. Սրբոյ Աւետարան ըստ Մարկոսի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Եւ*

*նոյնժամայն ճեպեաց զաշակերտսըն մտանել ի նաւ... Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր: Օգնական եղիցի ծառայիս Աստուծոյ՝ «Խչօին»:*

30. Ղուկաս ավետարանիչ

Ի6. Սրբոյ Աւետարան ըստ Ղուկասու. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Եւ էջ ի [Կ]ափառնաում՝ ի քաղաքն Գալիլեացւոց... զի գիտէին զնա, թէ Քրիստոսն է: Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր:*

31. Հովհաննես ավետարանիչ

32. Բուսական գլխազարդ

Ի9. Սրբոյ Աւետարանս ըստ Յոհանու. Տէրն մեր Յիսուս Քրիստոս – *Յետ այսորիկ գընաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլեացւոց՝ Տիբերեայ... Օգնական եւ պահապա՛ն եղիցի ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Ալվադին, Մխթարին»), յամենայն չարեաց պահեսցէ. ամէն:*

Ի4. Աղօթք վասն զավակ ծնելոյ – *Նայեա՛յ յաղաչանս ծառայիս քո եւ [աղա]խնոյն, որպէս հաճե[ցար]... յիշէ՛ ըզնեղութիւն վասն խնդութեան, զի ծնաւ մարդ յաշխարհ:*

33. Սողոմոն Իմաստունը սատում է սատանային

Ի0. Աղօթք կապանաց դիւաց եւ ալաց – *Սողոմոն Իմաստունըն ետես զիշխանն դիւաց... Ջճանապարհս քո Տէր ցուց ինձ /// վջ. թափուած:*

**SATENIK GRIGORYAN**

**ON TWO 18TH C. SCROLL AMULETS**

**Key words:** Old printed works, Amulets, Vardadzor village, Western Armenia, Alashkert region, scroll-shaped, later colophons.

Two recently discovered printed scroll amulets dated to the 18th century are preserved in Vardadzor village (Martuni region) by separate families who moved to the region from Alashkert, region of Western Armenia in the years 1829-1830. The older amulet (printed in 1716), called the “Amulet of Andreas” — belongs to the family of Artashes Grigoryan, a resident of Varadzor. The colophons of the scroll contain noteworthy information concerning the owners of the amulets. The other Amulet (printed in 1717) belongs the family of Aleksan Sirakanyan, also residents of Vardadzor. The Amulets feature 33 prayers and engraved images. This discovery is of great significance to the study of Armenian talismans from the early modern period.

**САТЕНИК ГРИГОРЯН**

## О ДВУХ СТАРОПЕЧАТНЫХ СВИТКАХ-ОБЕРЕГАХ XVIII В.

**Ключевые слова:** Старопечатный, новонайденный, амулет, свиток-оберег, село Вардадзор, Западная Армения, Алашкертская область, памятные записи (колофоны) позднего периода.

В двух семьях, переселившихся в село Вардадзор (Мартунинский район) из Алашкертской области Западной Армении (1829-1830-е гг.), находятся старопечатные свитки-обереги (амулеты) XVIII века. Первый по времени (1716 г.), «Свиток-оберег Андрея», принадлежит семье Арташеса Григоряна, жителю села Вардадзор. На одном из этих свитков имеются памятные записи, содержащие примечательную информацию. Второй свиток (1717 г.) принадлежит жителям того же села, семье Алексана Сираканяна. Оба оберега по сей день хранятся в селе. Они богаты молитвами и гравюрами, число которых в первом из них достигает 33-х. Таким образом, список известных экземпляров армянских старопечатных свитков-оберегов пополнился ещё двумя нововыявленными единицами.